

1. հանրային լողափ №1 (Սևան-Երևան միջպետական Մ4 ավտոմայրուղու 63 կմ-ից դեպի ավիամերձ հատված, 1.39 հա)
2. հանրային լողափ №2 (Սևան-Երևան միջպետական Մ4 ավտոմայրուղու 66,5 կմ-ից դեպի Թերակղզու ավիամերձ հատված, 1.82 հա)
3. հանրային լողափ №3 (Սևան-Երևան միջպետական Մ4 ավտոմայրուղու 63 կմ-ից դեպի ավիամերձ հատված, 5 հա):

Հայտերի ուսումնասիրության արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Սևանա լճի հանրային լողափի սպասարկման» պայմանագիր երեսունվեց ամիս ժամկետով:

→ Հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ է.

ա) դիմում՝ մասնակցության հայտի ([ձևը կցվում է](#)),

բ) իրավաբանական անձանց համար՝ գրանցման և հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

գ) անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,

դ) հանրային լողափի տարածքում իրականացվող միջոցառումների, ներդրումների,

կազմակերպվող գործունեության վերաբերյալ ծրագիր,

ե) մասնակցության նախավճարի անդորրագրի պատճեն:

→ Մասնակցության հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<Սևան>> ազգային պարկ>>

ՊՈԱԿ՝ Գեղարքունիքի մարզ, ք.Սևան, Կարմիր բանակի 56 հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:

→ Հայտ կարող է ներկայացվել ինչպես յուրաքանչյուր, այնպես էլ մեկ քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

→ Յուրաքանչյուր մասնակցից կարող է ներկայացնել միայն մեկ հայտ:

→ Հայտի ներկայացման, դրանց գնահատման և հանձնաժողովի գործունեության կարգը հաստատված է <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի խորհրդի «24» «փետրվարի» 2021թ. № 1 որոշմամբ ([կցվում է](#)):

→ Հաղթող կճանաչվի առավել լավագույն պայմաններով միջոցառումների ծրագիր ներկայացրած մասնակցիցը:

→ Հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ է <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի 900018002890 հաշվեհամարին կատարել 10 000 ՀՀ դրամի չափով մասնակցության նախավճար:

→ Հայտերի բացումը տեղի կունենա սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Սևան, Կարմիր բանակի 56 հասցեում:

→ Հայտերը բացելուց հետո՝ 7-օրյա ժամկետում մասնակցները կարող են մասնակցել հայտերի ամփոփման նիստին: Հաղթողի հետ կազմվում է արձանագրություն:

Մասնակցի կողմից դիմելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրությունը կարող է տրամադրվել նաև էլեկտրոնային եղանակով:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովին՝ 055-07-77-77, 0261 2-40-44 հեռախոսահամարով կամ sevanap@inbox.ru էլ. փոստով: